ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Մշակվել է՝ համայնքի ղեկավարին կից գործող «Սարալանջ համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման խորհրդակցական մարմնի» կողմից

Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Ռոբերտ Բարսեղյանի կողմից

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2016 թ դեկտեմբերի 15-ի թիվ 8 որոշմամբ

ՍԱՐԱԼԱՆՋ 2016Թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք ..... **Ошибка! Закладка не определена.**
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն ..... **Ошибка! Закладка не определена.**
   2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն ..... **Ошибка! Закладка не определена.**
   2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը ..... **Ошибка! Закладка не определена.**
   2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը ..... **Ошибка! Закладка не определена.**
   2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները ..... **Ошибка! Закладка не определена.**
   2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ ..... **Ошибка! Закладка не определена.**
   2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն ..... **Ошибка! Закладка не определена.**
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում **Ошибка! Закладка не определена.**
   3.1. Համայնքի զարգացման տեսլական ..... **Ошибка! Закладка не определена.**
   3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ ..... **Ошибка! Закладка не определена.**
4. ՀՀԶԾ ֆինանսավորում ..... **Ошибка! Закладка не определена.**
5. ՀՀԶԾ մոնիթորինգ ..... **Ошибка! Закладка не определена.**

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ

ՀՀ Արագածոտնի մարզի Սարալանջ համայնքի 2017-2021 թթ. հնգամյա զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ՀՀԶԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր:

ՀՀԶԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀՀԶԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ համապատասխան հոդվածների դրույթները, ինչպես նաև Արագածոտնի մարզպետի կողմից ներկայացված համայնքի հնգամյա զարգացման ծրագրի մշակման մեթոդական ուղեցույցը:

Ներկայացվող ՀՀԶԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Սարալանջ համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: ՀՀԶԾ-ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ: ՀՀԶԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել համայնքի հանրային ծառայությունների մատչելիության և հասանելիության, նոր ծառայությունների մատուցման և դրանցով պայմանավորված լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները: ՀՀԶԾ-ն մշակելիս որպես կողմնորոշիչ են դիտարկվել համայնքի զարգացնելու անհրաժեշտությունը: Վերհանված հիմնախնդիրների հիման վրա, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներից, համայնքի ղեկավարը՝ համայնքապետարանի աշխատակազմի և Սարալանջ համայնքի ավագանու հետ միասին մշակել է համայնքի 2017-2021թթ. ՀՀԶԾ-ն, որը քննարկվել և հաստատվել է համայնքի ավագանու կողմից և դրվել է գործողության մեջ:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ Արագածոտնի մարզ գյուղ Սարալանջ

Մակերեսը՝ 1248,25 հա

Բնակչությունը՝ 240 մարդ

Գյուղ Ապարանի տարածաշրջանում: Մարզկենտրոնից գտնվում է 38 կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է **Հաջիբաղր** անվանումը: Սարալանջ է վերանվանվել 1946 թ.-ին: Անվանումը պայմանավորված է գյուղի դիրքի հետ: Գյուղը տեղադրված է Ապարանից 3 կմ հեռավորության հյուսիս- արևելյան մասում,ծովի մակարդակից 2000 մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է: Ձմեռները տևական են,ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Ամառները տաք են,համեմատաբար խոնավ: Հուլիսյան միջին ջերմաստիճանը տատանվում է 22-25-ի սահմաններում, հունվարյանը -20-25-ի սահմաններում: Մթնոլորտային տեղումների քանակը 450-600մմ: Բնական լանդշաֆտերը սևահողային տափաստաններ են:

Գյուղի բնակչության նախնիները գաղթել են 1828-29թթ. Արևմտյան Հայաստանի Ալաշկերտ, Սասուն և Մշո գավառի Բուլանուխ գյուղից: 1831թ. ունեցել է 96, 1897թ՝338, 1939թ.՝ 432, 1959թ.՝ 242, 2001թ.՝ 238, 2004թ.՝ 219, 2013թ.՝ 235. 2015թ.՝ 240 բնակիչ, որից 54% -ը տղամարդիկ են, 46 %-ը կանայք: Գյուղն ունի 62 տնտեսություն:

Դպրոցը հիմնադրվել է 1900թ.: Եղել է երկդասյա, 1930թ. դարձել է տարրական, ապա՝ յոթնամյա, ներկայումս՝ հիմնական: Դպրոցի բակում հայր և որդի՝ Արամ և Արկադիկ Սարգսյանները տեղադրել են խաչքար:

Գյուղում և նրա շրջակայքում կա <<Մարիամ Աստվածածին>> եկեղեցի՝ կառուցված 19-րդ դարի վերջում ,որը վերակառուցվել է 2007թվականին՝ համայնքի բնակիչների կողմից և ամեն տարի սեպտեմբերի 21-ին համայնքը նշում է եկեղեցու վերակառուցման,անկախության և համայնքի օրը: Եկեղեցու բակում խաչքարեր են տեղադրել Արտյոմ Պողոսյանը, հայր և որդի՝ Կարեն և Ռուբիկ Կարապետյանները:

Գերեզմանոցի հյուսիս-արևելյան հատվածում է գտնվում Թուխ Մանուկ մատուռը: Ըստ վկայությունների, այն կառուցվել է 19-րդ դարում, խոնհարված եկեղեցու հիմքերի վրա: Մատուռը ուղղանկյուն հատակագծով պարզ կառույց է, շարված կոպտատաշ բազալտով: Վերանորոգվել է 1965թ. թբիլիսաբնակ սարալանջեցի Հայաստան Մանուկյանի միջոցներով:

Համայնքի տնտեսության մասնագիտացման ուղղությունը գյուղատնտեսությունն է: Ցուրտ կլիմայի արդյունքում այստեղ տնտեսության մասնագիտացման ճյուղը անասնապահությունն է: Զբաղվում են խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությամբ: Գյուղատնտեսական հողահանդակների հիմնական մասն օգտագործվում է որպես արոտավայրեր , վարելահողեր, խոտհարքներ: Զբաղվում են բանջարաբոստանային, հացահատիկային, կերային կուլտուրաների մշակությամբ: Տնամերձ հողակտորներում կան բազմամյա տնկարկներ:

Համայնքի բնակչության բաշխումն ըստ հետևյալ տարիքային խմբերի (մարդ).

		Ընդամենը	այդ թվում՝ իգական	այդ թվում՝ արական
1.	մինչև 1 տարեկան	3	-	3
2.	1-2 տարեկան	11	8	3
3.	3-4 տարեկան	6	-	6
4.	5-6 տարեկան	4	1	3
5.	մինչև 6 տարեկան.....	20	8	12
6.	7-10 տարեկան	6	4	2
7.	11-14 տարեկան	5	2	3
8.	15-17 տարեկան	11	7	4
9.	մինչև 16 տարեկան.....	41	18	23
10.	մինչև 18 տարեկան.....	46	19	27
11.	18-22 տարեկան	18	7	11
12.	23-45 տարեկան	95	45	50
13.	46-62 տարեկան.....	59	27	32
14.	63 և ավելի տարեկան	22	9	13
15	Ընդամենը բնակչություն.....	240	107	133

Համայնքի բնակչության մեջ հետևյալ սոցիալական խմբերի ներկայացվածությունը (մարդ).

	Ընդամենը	այդ թվում՝ իգական	այդ թվում՝ արական
1. Հաշմանդամներ	12	6	6
որից՝			
1.1. հաշմանդամ երեխա.....	2	1	1
այդ թվում՝			
1.1.1. 0- 5 տարեկան	-	-	-
1.1.2. 6-15 տարեկան	2	1	1
1.1.3. 16-18 տարեկան.....	-	-	-
2. Միակողմանի ծնողազուրկ երեխա.....	1	-	1
3. Առանց ծնողական խնամքի մնացած երեխա.....	-	-	-
4. Միայնակ մոր երեխա.....	-	-	-
5. Ամուսնալուծված անձի երեխա.....	1	1	-
6. Ոստիկանության հսկողության տակ գտնվող երեխա..	-	-	-
6.1. այդ թվում՝ հաշմանդամներ.....	-	-	-
7. Կենսաթոշակառու.....	39	15	24
8. Միայնակ չաշխատող կենսաթոշակառու.....	1	1	-
9. Տարեց կենսաթոշակառուներ (75 տարեկան և բարձր).....	9	4	5

Համայնքի տնային տնտեսություններից

	Ընդամենը
1. Երեք և ավելի երեխաներ /0-18 տարեկան/ ունեցող տ/տ-եր.....	4
2. Միայն կենսաթոշակառուներից /63 և ավելի տարեկան/ կազմված տ/տ-եր.....	3

3. Հաշմանդամ երեխա ունեցող տ/տ-եր	2
4. Մինչև 6 տարեկան երեխա ունեցող տ/տ-եր.....	6

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Համայնքի 16 և ավելի տարեկան բնակչության բաշխումն ըստ կրթամակարդակի (մարդ).

1. Տարրական	9
2. Հիմնական.....	-
3. Միջնակարգ.....	139
4. Միջին մասնագիտական.....	20
5. Բարձրագույն.....	30
6. Առանց պարտադիր կրթության.....	-

Համայնքում.

	Ընդամենը	որից՝ իգական	որից՝ արական
1. Հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսուցիչների թվաքանակը.....	9	8	1
այդ թվում՝ 1.1 Բարձրագույն կրթությամբ.....	7	6	1

Համայնքի հողերի բաշխվածությունն ըստ տեսակների (հա).

		Ընդամենը	Համայնքում առկա	պետական	իրավաբանական և ֆիզիկական անձանց սեփականություն
2.1.	Համայնքի վարչական տարածքը, այդ թվում՝	1248.25	368.70	745.04	134.51
2.2.	գյուղատնտեսական նշանակության հողեր	877.58	357.21	413.87	106.50
2.3.	պահուստային հողեր	-	-	-	-
2.4.	բնակելի շինությունների տակ հողեր	36.87	27.59	-	-
2.5.	արդյունաբերական, արտադրական շինությունների տակ հողեր	5.94	1.50	4.44	-
2.6.	ընդերքօգտագործման հողեր	-	-	-	-

2.7.	ճանապարհների տակ հողեր	0.54	0.32	0.22	-
2.8.	առողջապահական, հանգստավայրերի, մարզական ու պատմամշակութային նշանակության հողեր	-	-	-	-
2.9.	անտառային հողեր	324.08	-	324.08	-
2.10	ջրային ֆոնդի հողեր	2.02	-	2.02	-
2.11	հատուկ պահպանվող տարածքներ, արգելոցներ	1.22	1.22	-	-
2.12.	Այլ_____(նշել)	-	-	-	-

2.2 Համայնքի սոցիալ- տնտեսական իրավիճակը

Սարալանջ գյուղական համայնքի ավագանու 25.12. 2015թ. թիվ 7 որոշմամբ հաստատված 2016թ. բյուջեն եկամտային մասով կազմել է 5.780.0 հազար դրամ , ծախսերի գծով 5,623,7 հզ. դրամ: Սարալանջ համայնքի 2016 թվականի բյուջեի եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 39.0%՝ 2 280.0 հազար դրամ:

2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը

1. Վերջին Օրերի Սրբերի Բարեգործության կազմակերպության կողմից համայնքում կատարվել է խմելու ջրագծի վերանորոգման աշխատանքներ :
2. Համայնքի սեփական եկամուտների միջոցով կատարվել է ոռոգման ցանցի վերանորոգում, ներհամայնքային ճանապարհների վերանորոգում, գիշերային լուսավորության սարքերի տեղադրում:

2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումներ

Ծավալի նկատմամբ սահմանափակում չկա, սակայն պետք է հիշել, որ համայնքի բյուջեն առանձին փաստաթուղթ է և կարիք չկա այն նույնությամբ ներառելու ՀՀՋԾ մեջ:

Համայնքի բյուջեի մուտքերը, կարելի է ասել, ձևավորվում են բացառապես վարչական բյուջեի միջոցների հաշվին: Վարչական բյուջեի եկամուտները ձևավորվում են սահմանափակ թվով

եկամտատեսակների՝ հարկերի, տեղական տուրքերի և գույքի վարձակալությունից եկամուտների հաշվին: Համայնքի բյուջեի կանխատեսվող եկամուտների մեծ մասը ձևավորվում են պետական բյուջեից համայնքներին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների հաշվին:

Քանի որ համայնքի բյուջեի ֆոնդային մասում մուտքեր քիչ են կանխատեսվում, ապա պլանավորվող հինգ տարիների կապիտալ ծախսերը մեծամասամբ կիրականացվեն համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումների և դոնոր կազմակերպությունների հաշվին:

Համայնքի 2015-2016թթ. բյուջեի մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը
հազար դրամ

		2015թ. փաստացի	2016թ. Փաստացի	2017թ. Կանխ.	2018թ Կանխ.	2019թ. Կանխ.	2020թ Կանխ	2021թ. կանխ
1	Ընդամենը եկամուտներ, որից՝	6,139,0	6,053,6	5,920,0	5,720,0	5,720,0	5,720,0	5,720,0
2	ա/Հարկային եկամուտներ, ընդամենը	1,558,3	2,220,0	1,610,0	1,410,0	1,410,0	1,410,0	1,410,0
2.1	այդ թվում՝ հողի հարկ	800.1	750,0	1,000,0	800,0	800,0	800,0	800,0
2.2	գույքահարկ	732.1	700,0	600,0	600,0	600,0	600,0	600,0
2.3	եկամտահարկ	-						
3	բ/ Տուրքեր, ընդամենը	26.0	20,0	10,0	10,0	10,0	10,0	10,0
3.1	այդ թվում՝պետական տուրքեր	-						
3.2	տեղական տուրքեր	26.0	20,0	10,0	10,0	10,0	10,0	10,0
4	գ/ Ոչ հարկային եկամուտներ, ընդամենը	-						
5	դ/ Պաշտոնական տրանսֆերտներ, ընդամենը	-						
5.1	այդ թվում՝ դոտացիա	3500.0	3500,0	3,500,0	3,500,0	3,500,0	3,500,0	3,500,0
5.2	սուբվենցիա	767,8	750,1	750,0	750,0	750,0	750,0	750,0
6	ե/ Տարեսկզբի ազատ մնացորդ	268.4	273,6					
7	զ/ Մուտքեր հողի օտարումից							
8	Գույքի վարձակալությունից եկամուտներ	62,2	60,0	60,0	60,0	60,0	60,0	60,0

2.5 **Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ**

- Գործազրկությունը,
- Հողերի բերրիության ցածր աստիճանը,
- Անասնապահությունը զարգացնելու դժվարությունը,
- Վարկերի բարձր տոկոսադրույքները,
- Գյուղ մթերքի ցածր գները:

2.6 ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐԻ (ՈՒԹՀՍ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքի վարչական տարածքը 100 %-ով գազաֆիկացված է:

Առկա է՝

- հեռախոսակապ,
- բջջային կապի 3 օպերատոր,
- մշտական խմելու ջուր,
- կոյուղի,
- գիշերային լուսավորություն:

Թույլ կողմերը՝

- Աշխատատեղերի պակասը,
- Ցածր աշխատավարձի առկայությունը,
- Ոռոգման ջրագծի անմխիթար վիճակը,
- Համայնքային կենտրոնի բացակյությունը,
- Դպրոցի բարեկարգումը:

3.ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ և ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

3.1 Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի տարածքային և տնտեսական զարգացման գործում կարևոր է հաշվի առնել համայնքի բնակչության հեռանկարային աճը, որը ելնում է համայնքի հեռանկարային տարածքային զարգացման հնարավորություններից:

Համայնքի զարգացման ռազմավարությունն է՝ բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ- տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները:

Համայնքի կայուն զարգացման ցուցանիշների կանխատեսվող արժեքները հինգ տարիների համար (2017-2021թթ.)

Հ/Հ	Ցուցանիշները	2017	2018	2019	2020	2021
1.	Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով)	12%	11,5%	10%	8%	5%
2.	Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ,արտահայտված տոկոսով	1.18%	2%	2%	2,3%	3%
3.	Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով	0,5%	0,7%	0,9%	1%	1%

3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակները

- Համայնքի ղեկավարի իրավասության շրջանակներում միջոցներ ձեռնարկել պաշտպանելու բնակչության իրավունքներն ու շահերը,
- Համայնքի բնակչության աշխատանքից ազատ ժամերին հանգստի կազմակերպում
- Միջոցներ ձեռնարկել համայնքի սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական, կոմունալ ,բնակարանային պայմանների բարելավման համար,
- Բարելավել համայնքի բյուջեի ֆինանսական վիճակը՝ բարձրացնելով եկամուտների հավաքագրման մակարդակը,

- Կատարել ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատում :

Համայնքի զարգացման ծրագրերը

Առաջիկա 5 տարիներին համայնքի հիմնական ծրագրերն են՝

1. Հիմնական դպրոցի վերանորոգում, գազաֆիկացու մ և ջեռուցում,
2. Համայնքային կենտրոնի կառուցում,
3. Ոռոգման ցանցի կառուցում,
4. Ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատում և ջրահեռացում,
5. Աշխատատեղերի ստեղծում՝ ջեմոցային տնտեսության ստեղծում,

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ N1

«Համայնքիհիմնական դպրոցի վերանորոգում, գազաֆիկացում և ջեռուցման համակարգի կառուցում »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը							
Ծրագրի անմիջական նպատակ՝ **Բարեկարգում և ջերմության ապահովում**							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	10.000.0	10.000.0	10.000.0	10.000.0	10.000.0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	2000.0	-	-	-	-
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	1500.0	10.000.0	10.000.0	10.000.0	10.000.0
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1.Նախահետազոտական ծախսեր: 1.2.Նախահաշիվների կազմում: 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1.Նորգման աշխատանքների կազմակերպում 2.2. Աշխատանքների ավրտ, կատարողական և ընդունման հանձնման ակտերի կազմում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր Կապիտալ ծախսեր՝10.000.0հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝10.000.0հազար դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Շինանյութ,ջեռուցման համակարգ,աշխատուժ						
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչները						
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.						

Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքիհիմնական դպրոցի վերանորոգում, գազաֆիկացում և ջեռուցման համակարգի կառուցում

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր N 2

«Համայնքային կենտրոնի կառուցում »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը							
Ծրագրի անմիջական նպատակ՝ **ակտիվ մշակութային կյանքի կազմակերպումը՝ երիտասարդության ներգրավմամբ**							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	20.000.0	20.000.0	20.000.0	20.000.0	20.000.0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	5000.0	-	-	-	-
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	3.000.0	20.000.0	20.000.0	20.000.0	20.000.0
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1.Նախահետազոտական ծախսեր: 1.2.Նախահաշիվների կազմում: 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1.Կառուցման աշխատանքների կազմակերպում 2.2. Աշխատանքների ավրտ, կատարողական և ընդունման հանձնման ակտերի կազմում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝20.000.0հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝20.000.0հազար դրամ						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը							
Ծրագրի հիմնական	Համայնքի բնակչները						

շահառուները	
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.
Ծրագրի համառոտ նկարագրություն	Համայնքային կենտրոնի կառուցում

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր Ո Ն 3

«Ոռոգման ցանցի կառուցում »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը							
Ծրագրի անմիջական նպատակ՝ **Գրուղատնտեսության զարգացում**							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	2.000.0	2.000.0	2.000.0	2.000.0	2.000.0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	3.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	1000.0	-	-	-	-
	4.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	800.0	2.000.0	2.000.0	2.000.0	2.000.0
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1.Նախահետազոտական ծախսեր: 1.2.Նախահաշիվների կազմում: 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1.Կառուցման աշխատանքների կազմակերպում 2.2. Աշխատանքների ավրտ, կատարողական և ընդունման հանձնման ակտերի կազմում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝ Կապիտալ ծախսեր՝2.000.0հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝2.000.0հազար դրամ						

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Բետոնյա կիսախողովակներ, շինանյութ, աշխատուժ,
Ծրագրի հիմնական ռիսկերը	
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչները
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ոռոգման ցանցի կառուցում

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր Ը N 4

« Ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատում և ջրահեռացում »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը							
Ծրագրի անմիջական նպատակ՝ **Համայնքի բարեկարգում**							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	5.000.0	5.000.0	5.000.0	5.000.0	5.000.0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	1.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	2000.0	-	-	-	-
	2.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	3.000.0	5.000.0	5.000.0	5.000.0	5.000.0
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1.Նախահետազոտական ծախսեր: 1.2.Նախահաշիվների կազմում: 2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1.Կառուցման աշխատանքների կազմակերպում 2.2. Աշխատանքների ավրտ, կատարողական և ընդունման հանձնման ակտերի կազմում						
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր՝						

	Կապիտալ ծախսեր՝5.000.0հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝5.000.0հազար դրամ
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	
Ծրագրի հիմնական ռիսկերը	
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչները
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատում և ջրահեռացում

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր N 5

« Ջերմոցային տնտեսության ստեղծում »

(Ծրագրի անվանում)

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը							
Ծրագրի անմիջական նպատակ՝ **Աշխատատեղերի ապահովում**							
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	10.000.0	10.000.0	10.000.0	10.000.0	10.000.0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ	3.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	2000.0	-	-	-	-
	4.						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ				
		2016	2017	2018	2019	2020	2021
		0	1500.0	10.000.0	10.000.0	10.000.0	10.000.0
Ծրագրի հիմնական գործողությունները	1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 1.1.Նախահետազոտական ծախսեր: 1.2.Նախահաշիվների կազմում:						

	2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ 2.1.Նորգման աշխատանքների կազմակերպում 2.2. Աշխատանքների ավրտ, կատարողական և ընդունման հանձնման ակտերի կազմում
Ծրագրի բյուջեն	Ընթացիկ ծախսեր Կապիտալ ծախսեր՝10.000.0հազար դրամ Ընդհանուր բյուջեն՝10.000.0հազար դրամ
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	
Ծրագրի հիմնական ռիսկերը	
Ծրագրի հիմնական շահառուները	Համայնքի բնակչները
Ծրագրի սկիզբ և ավարտ	2017-2021թթ.
Ծրագրի համառոտ նկարագրություն	Ջերմոցային տնտեսության ստեղծում

4. ՀՀԶԾ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Համայնքի յուրաքանչյուր տարվա բյուջեի նախագծի կազմման ծրագրային հիմքը ՀՀԶԾ-ում համապատասխան տարվա համար նախատեսված ոլորտային և բնակավայրային ծրագրերն են, որոնց իրականացման համար հաշվարկվել են ֆինանսավորման համապատասխան աղբյուրներ և ծախսեր: Գործնականում, ՀՀԶԾ-ի իրականացումը հանգում է հիմնականում (չհաշված ֆինանսավորման այլ աղբյուրների հաշվին նախատեսված ծրագրերը) համայնքի գալիք հինգ տարիների բյուջեների կատարմանը:

5. ՀՀԶԾ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

ՀՀԶԾ-ի ներքին մոնիթորինգն իրականացվելու է ՀՀԶԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով ԽՄ-ի կողմից յուրաքանչյուր տարին մեկ անգամ:

ՀՀԶԾ-ի մոնիթորինգն իրականացվելու է ըստ ոլորտային ծրագրերի ու միջոցառումների աշխատանքների կատարման ցուցանիշների: